ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

Վերջին տարիներում Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիան ու նրա ֆիզիկո-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների, գյուղատնտեսական և բիոլոգիական գիտությունների բաժանմունքները ըզբաղված են մեր ժողովրդական տնտեսության համար խոշոր նշանակություն ունեցող մի շարք պրոբլեմներով։

Երեկ սկսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի ամառային սեսիան, որը նվիրված է մեր ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության համար կարևորագույն նշանակություն ունեցող երկու պրոբլեմների քննությանը։ Դրանք են՝ Հարավային Հայաստանի գունավոր մետաղների հանքերի ու նրանց օգտագործման և Արարատյան դաշտի ոռոգման ու աղակալված հողերի յուրացման հարցերը։

Հուլիսի 4-ին ֆիզիկո-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի գիտական նիստում լսվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի իսկական անդամ Կ. Պաֆենդոլցի զեկուցումը «Հայաստանի հարավային մասի երկրաբանական կառուցվածքի հիմնական գծերը» հարցի մասին։

Նույն օրը գյուղատնտեսական և բիոլոգիական գիտությունների բաժանմունքների միացյալ նիստում լսվեց բիոլոգիական գիտությունների թեկնածու Հ. Փանոսյանի զեկուցումը «Հայաստանի աղակալած հողերի բիոլոգիական առանձնահատկություններ, կապված նրանց իրացման հարցի հետ» թեմայով։

Զեկուցումները լսվեցին մեծ հետաքրքրությամբ և առաջացրին լայն քննարկում։

Սեսիան շարունակվում է։

Հուլիսի 5-ին ֆիզիկո-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բաժանմունքի գիտական նիստում լսվելու է երկրա-հանքաբանական գիտությունների թեկնածու Ս. Մկրտչյանի զեկուցումը «Քաջարանի և Ագարակի պղնձա-մոլիբդենային հանքավայրերը և նրանց հեռանկարները» և երկրա-հանքաբանական գիտությունների թեկնածու Բ. Վարդապետյանի զեկուցումը «Հարավային Հայաստանի պղնձա-հանքային բազան (Ղափանի հանքավայրը) և նրա զարգացման հեռանկարները» խնդրի մասին։

Գյուղատնտեսական և բիոլոգիական գիտությունների բաժանմունքների միացյալ նիստում հուլիսի 5-ին լսվելու են զեկուցումներ հետևյալ հարցերի մասին՝ «Արարատյան դաշտավայրի երկրաբանական և հիդրոերկրաբանական կառուցվածքը» (զեկուցող՝ երկրա-հանքաբանական գիտությունների թեկնածու Ա. Դեմյոխին), «Հողերի պոմպային շորացումը և դրա գործնական կիրառումը Արարատյան դաշտավայրում» (զեկուցող՝ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Գ. Օգանեզով) և «Արարատյան դաշտավայրի ճահճացած հողերի ագրոտեխնիկան» (զեկուցող՝ գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Գ. Աղաջանյան)։

Բաժանմունքների նիստերի ավարտումից հետո հուլիսի 7-ին իր աշխատանքները կսկսի Ակադեմիայի ընդհանուր ժողովը։